Բ. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 31 ՄԱ. 99 — ԹԻՒ 116

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուղղարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

—)(—

Գրութիւնք ետ չեն տրուիր

—)(—

Հանուցման տողը 20 սանտիմ է. հրատարակութեան անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

)(ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ)(

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

R. P. Kalémkarian (Autriche) Mechitharistengasse W. 4 Vienne

Նամակ եւ դրամ պիտի խմբագրութեանս հասցէին

—

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна.

Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

—

)(ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ)(

ՍՈՎ ԵՒ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—

Բ.

Հայաստանում էլ սով է։

Ե՞րբ սով չէ այդ անտէր երկրում։ 1877 թ.ից դէս միշտ թանգութիւն ու սով է այնտեղ։

Հրէական վառ երեւակայութիւնը երջանկութեան իդէալ եդեմական-դրախտը հայոց երկրումն է տեղաւորել։

Եւ այդ Հայաստանն այսօր մշտական սովի ճանկերումն է գալարում։

50,000 որբեր փողոցներում, բաց երկնքի տակ են մնացել։

70,000 մարդ միայն Վանայ վիլայէթում սովից մեռնում են բառիս բուն մաքով։

Զմրան խիստ ցրտերը և անօթութիւնն ապքատ ազգաբնակութեան երկու խարաղաններն են։

Այդ երկուսն էլ միացած ուժով ճնշում, հալածում են չքշուառացած հային։

Վանի, Տիգրանակերտի և այլ նահանգներում տիրող թշուառութիւնների նկարագրութիւնը կարդացողի մարմնով սարսուռ է անցնում։

Մի՞թէ մի փոքրիկ ու հալածուած հասարակութիւն կարող է դիմանալ ա՛յդքան քստմնելի թշուառութիւնների։

* * *

Այդ սովը արդիւնք է երկու պատճառների։ Մէկը վաշխառութիւնն է, որ ծնեցնում է «արհեստական» սով, միւսը՝ բռնակալութիւնը։

Վաշխառուների արհեստական սովի արմատը կրկին բռնակալութիւնն է։

Հարկը պահանջում է դիւղացուց հնչիւն դրամով. իսկ նա չունի։

Ունիս չունիս՝ պէտք է վճարես...

Եւ ահա վրայ է հասնում վաշխառուն, մեռած գներով խլում գիւղացու բոլոր հացահատիկները, ամպարում ու պահում։

Գիւղացին ստիպուած է ծախել վաշխառուի ուզած գներով։ Բռնակալի խարազանը նրա մէջքին է. հնչիւն դրամ է ուզում, իսկ այդ մի՛ն վաշխառուն ունի։

Հաւաքում է վաշխառուն բոլոր հացը և տէր դառնում հրապարակին։

Ունեցողն ինքն ու իր ընկերներն են. ի՛նչ գնով ուզեն կը ծախեն։

Այդպիսով ծնում է թանկութիւնը. որ սովի նախադուռն է։

Այս երեւոյթը միշտ կայ մեր երկրում։ Նա բռնակալութեան անբաժան ընկերն ու հիմքերից մէկն է։

* * *

Հայաստանի սովի սկզբնական արմատը պէտք է որոնել Ելզի Կալանաւորի խարխուլ գահի տակ։

Այնտեղից է դուրս գալիս սովը, այնտեղից աւերն ու սրածութիւնը։

77 թ.ից մինչեւ այսօր Բոսֆորի բռնաւորը ձգտում է արմատախիլ անել Հայ ժողովուրդը, ղեկեղմանացնել նրա երկիրը և խաչ դնել հայկական խնդրի վրայ։

Ուղղակի և անուղղակի միջոցներով նա գրգռեց թուրք, քուրտ և չերքէզ տարրերը հայերի դէմ։

Թալանն ու կողոպուտը աճեց, հրձգութիւնը բազմացաւ։

Բանտարկութեան ու կաշառքի ճանապարհով ծծեց նա ժողովրդի ունեցած պահեստի դրամը։

Հարկերը, որ առաջ շա՞տ քիչ էին և մթերքներով էին դանձւում, հրէշաւոր չափերի հասան և հնչիւն դրամի վերածուեցան։

Դրանով աճեց վաշխառութիւնը, որ տղրուկի պէս ծծում է ժողովրդի վերջին ունեցածը։

Իսկ այդ ամէնի թագն ու պսակը կազմեցին 94—97ի կոտորածները։

Ոչնչացան 100-150,000 աշխատաւոր ուժեր, իսկ մնացածներից շատերն էլ գաղթեցին։

Դրախտային այգիները բարձիթողի են արուած, բարեբեր արտերն անմշակ խոպանացել են։ Եղած մշակողները զուր են համարում աշխատիլ. ո՞ւմ համար աշխատին և ինչո՞ւ... քիւրան է թալանելու, Սուլթանն է խլելու...

Հայի բոլոր կալուածներին տիրանում են խաչնարած քրդերը, որ ամէն հող վերածում են արօտատեղի և երկրի բերքը քշացնում։

Սրանք են սովի պատճառները։

* * *

Բաղմացաւ եղած թշուառութիւնը, ցնցեց բոլոր քաղաքակիրթ մարդկութեանը։ Օգնութեան հասան զանազան միսիոնարներ, բարեգործներ ու հոգեւորականներ։

Բացուեցան որբանոցներ, բաժնուեցան նպաստներ, մինչեւ իսկ եղ ու կով, սերմացու...

Բռնակալը լաւ գիտէ, որ այդ ամէնը ջէրօ են—մի ֆաթիլ ովկիանոսի մէջ։ Բայց նորից ուզեց խանդարել և առիթից օգտուիլ։

Նա փակեց օտարների որբանոցները, խանդարեց նրանց նպաստամատոյց ընկերութիւնների գործունէութիւնը և դրանց փոխարէն իր որբանոցները բացեց... թղթի վրայ, ի՛ր նպաստները բաժանեց... իր փաշաների կոկորդում։

Մեծ-ոճրագործը մեծ բարերար ուզեց ձեւանալ և Եւրոպայի ու հայի աչքին փոշի փչել։

Հաւատացող այլ ևս չը կայ։

Ելզից ծնու սովը և Ելզը սնեցնում, մեծացնում է իր այդ զաւակին։ Մի օր իր ծնունդը իր կոկորդից կը բռնէ։

Հեռու չէ այդ օրը. քուրան ու թուրքն էլ արդէն սովամահի դուռն են հասել. մի օր նրանք էլ կը շարժուին։

* * *

Որբանոցներ են հիմնում, որ որբերը խնամեն... իսկ Սուլթանի դերանդին նրանց հնձելու համար մշտ սրուում է։

Ժողովարարութիւններ են անում սովատանջներին փրկելու համար։ Սովից աղաւում է հայը և Սուլթանի սրով մեռնում, ոչ-ոքի հետաքրքիր անէն է։

Նպաստ է տալիս Եւրոպային։ Քանի նա այն տեղ է, նպաստը կայ. բայց երբ Եւրոպացին հեռանում է, վրայ է հասնում զինուած քիւրտը կամ Սուլթանի հարկահանը. առնում է տրուած նպաստը, նրա հետ էլ հայի վերջին ունեցածը... իսկ եթէ չշատպեց տալ՝ մարում են նրա կեանքը...

Ահա նպաստների արդիւնքը։

Նրանց ինը տասերորդը գնում է Սուլթանի կոկորդը կամ քրտի գրպանը։

Անէն է հայը. նա իր անձը և ստացուածքը պաշտպանելու ոչ մի միջոց չունի. ի՞նչ անէ ուրեմն ձեր նպաստը։

* * *

Ո՞չ. ողորմութիւնով բան չի դառնայ։ Քանի կայ բռնակալութիւնը, կը լինի և սովը։

Զենք ուզում ձեր ողորմութիւնը. զէ՞նք տուէք մեզ։

Հայի բարերարը նա է, որ նը-պաստի փոխարէն զէնք կը տայ նրա ձեռքը։

Նպաստը զէրօ է, եթէ գիւղացու մի ձեռքին դութան, միւսումը հրացան չկայ։

Ով ուզում է իսկապէս օգնել հային՝ հայ ու հրացան պիտի տայ նրան։

Հացը՝ սովից չմեռնելու, իսկ հրացանը՝ սովի ու թշուառութեան աղբիւր Ելզի խարխուլ գահի դէմ կռուելու համար։

Այս է միակ ճանապարհը։

ԳԱՍՊԱՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 25 Մարս

Նոր բան մը յայտնած չը պիտի ըլլամ երբ ըսեմ թէ քաղաքիս առեւտրական հրապարակը շատ նեղ վիճակի մէջ է, և որ օրէ օր աւելի կը վատթարանայ կառավարութեան բանեցուցած խիստ միջոցներուն պատճառովը։

Գործ չը կայ։ Երկրին ներսերը սովը իր սահմռկող ուրուականը կը պտըտցնէ, քաղաքիս մէջ լըրտեսներու, քիւրտերու և անխիղճ պաշտօնեաներու վոհմակներ իրենց սպառնացող և ահարկու նայուածքները կը ցցուցնեն ա-

ժէն կողմ, և դուրսէն ալ ոչ մէկ վստահութիւն կը տրուի գործի տէր մարդերու։

Թուրքիոյ առեւտրական գործառնութիւնները հոկայաքայլ կը դիմեն վերջնական անշարժութեան, անանկութեան։ Վա՜յ այն մարդուն որ համարձակի իր միճակը պարզել և կամ ամիրոյ տագնապի մասին դիտողութիւններ ընել, անմիջապէս կը բռնուի և ծակը կը նետուի, իբրեւ Թուրքիոյ ապագային համար չարագուշակ վհուկ մը։

Քաղաքական գործիքներուն խըստիւ պատուէր տրուած է չը խօսիլ Սէլանիկի մէջ անցած դարձածի մասին, թէ հոն որչափ զօրք, որչափ ռազմամթերք կան։ Կարծես կառավարութիւնը կուզէ ծածկել իր հպատակներէն իր քիչ քիչ քայքայուելուն իրականութիւնը։ Բայց դժբաղդաբար, փոխադրները, կասկածոտ դէմքերը ալ աւելի մեծ վախով մը կը համակեն ժողովուրդը։

Թուրք կառավարական պաշտօնէութիւնը հեւաշնչեալ աւելի ապստամ զանգուած մը կը դառնայ անխիղճ ու խարդախ մարդերու, որոնք տնոր տկար կողմը գտած կը շահագործեն զանոնք։

Քաղաքիս Հօճա-Փաշաի կողմը գտնուած Սէֆա անուն տպարանի մը Թուրք տէրը, կառավարութեան գիր մը կուտայ թէ ինք ստիպուած է ծախելու իր տպարանը և պիտի երթայ Եւրոպա, եթէ իրեն չենք շնորհք ամսականով գործ մը չի տրուի։ Կառավարութիւնը անմիջապէս ինք կը գնէ տպարանը և Թուրք լրագրապետի մը կը նուիրէ Սուլթանին կողմէն, իսկ Սէֆայի տէրը լեցուն ամսականով պաշտօնի կը կոչուի։

Ուրիշ մէկը, Սիւրիայի մը Եուսուֆ-էլ-Հաճ անուն, որ ժամանակ մը «էլ-Հագայիգ» արաբերէն թերթին մէջ ծառայած էր, և ամէն տեսակ ապտոտ միջոցներու դիմած դրամ ճարելու համար, տարիներ առաջ կը յաջողի արտատահման մնկնիլ և հոն կառավարութեան դէմ թերթ մը հիմնել, որուն հաղիւ թէ երկրորդ թիւը կելլէ. անմիջապէս առջին կը բացուին Սուլթանին շնորհաց դռները։ Մարդը Պոլիս կուգայ և այսօր Տարայի Տէվլէթի անդամ է։

Օրինակներ բազմապատկելու հարկ չը կայ։ Քայքայումը ներսէն ու դուրսէն է միանդամայն։

Այս անգամ այս կարճ տեղեկութիւններով բաւականանալով կը խոստանամ յաջորդով աւելի երկար գրել աղդալին գործերու մասին։

ԱՂԵՂ.

Թուրիզ, 10 Մարտ

Իմ լռութիւնը. — Առաջնորդը և գործերը

Մի քանի ամսով Թաւրիզից հեռացած լինելով, իմ թղթակցութիւնները ընդհատուեցին։ Իմ բացակայութեան միջոցում Թաւրիզը կենդանութեան նշաններ է ցոյց տուել, ահագին զարմաղալներ, կռիւ և տուրումբոցներ են բարձրացել։ Ափսո՜ս, որ ժամանակին չը կարողացայ հաղորդել, բացակայութեան պատճառով։ Այժմ մի ամփոփ գաղափար եմ տալու անցած ու դարձածի մասին։

* * *

Սրբազան Առաջնորդը Երբ ոտը Թաւրիզ դրեց, իրա բաղդից, հենց առաջին խնդիրը և գործը եղաւ Սուսանեանի դարշելի գատը տեսնել։ Ժամանակին արդէն գրել եմ այդ մասին և մի առ մի թուել ծանօթ պարագաները։ Ընթերցողին յայտնի է «հայ Դրէյֆուսի» գործը, նրա (Սուսանեանցի) խարդախ և կեղտոտ արարքները։ Սրբազանը մի անկեղծ անձնաւորութիւն լինելով, իսկոյն պարզեց իրա համոզումը և երեւան հանեց Սուսանեանցի ու նրա պաշտպան-համախոհների անպատուութիւնը։ Այս գատը ազդ. առաջնորդարանից ռուսական հիւպատոսարան փոխադրուեց։ Սուսանեան ռուսահպատակ լինելով, դիմել էր կոնսուլին։ Հիւպատոսարանում այդ գատը անաչառ կերպով քննուեց և Սուսանեանցի պահանջի անիրաւ լինելը վճռուեց...

Հիւպատոսարանի այս արդար վճռի վրա կատաղեցին հայ-Դրէյֆուս (Սուսանեան), հայ-Զօլա (Ասատուր Փանուէլեանց), հայ-Դոն-Քիշօտ (Ռափայէլ Մովսէսեանց) և սրանց արբանեակները.. իրանց կատաղի թոյները թափեցին առաջնորդ սրբազանի վրա։ Այս կեղտոտ արարածները չը ամաչեցին սրբազանից այլ և այլ առիթներով դժգոհ իրանց նմաններին, գլխաւորաբար Ղալայ Թաղի խուարամիտ, կեղծ և շահախնդիր ուսուցիչներին (.*)... և ձեռք ձեռքի տուած կազմեցին գործերի մի խումբ։ Եւ այս խումբը իր անախորժ կռկռոցները լսելի անել տալու համար մի ճահճային վայրի պէտք զգաց, և իրան ասպարէզ ընտրեց Թիֆլիզի «Նոր-Դար» թերթը, և այժմ այդ ճահճային միջավայրում բարձրացնում են իրանց կռկռոցները...։ Զարժէր ուշադրութիւն դարձնել նրանց կռկռոցներին, և իսկապէս էլ ուշ դարձնող չէ եղել, բացի անշուշտ Թիֆլիզի վարկը ընկած «Նոր-Դար» փողոցային թերթից։

Այդ գործերը օգտուելով սրբազանի ազնիւ և ներողամիտ բնաւորութիւնից, յեղաշրջում են փաստերը, խեղաթիւրում են յայտնի իրողութիւնները, և իբրև փողոցային մարդիկ, շրջելով փողոցները, ականջից ականջ զբաղարտութիւններ, ստութեր և հայհոյանքներ փոխում..., այդքանով էլ չը բաւականանալով, սրում են իրանց գրիչները և հրապարակ նետում մին միւսի ետեւից, «Թղթակից», «Ն.», «Հաղար», «***» և այլն ստորագրութեամբ։

Սրանց մասին ուրիշ անդամ կը խօսենք։

ՄԻՐԶԱ.

Փ. Պոլիս, 25 Մարտ

Ոսոիկանութեան վերջին հրամանին համեմատ, Արսէն վարդապետ մեկնելու քաղաքէս երկուշաբթի դիշեր։ Երիտասարդութիւնը չէր գիտեր թէ դէպի ո՞ւր պիտի մեկնէր։ Ամէն ինչ գաղտնի ծնցած էր։ Ուշ ատեն 40ի չափ յեսադիմականներ, բիրերով զինուած, կայարան կերթան վարդապետը պաշտպանելու երեւակայական յարձակումներու դէմ։ Հոն Թուրքերէն լեզուով ազդարարական ճառեր կարտասանուին վարդապետին և մէկ քանի երիտասարդներու կողմէ։ Նախատինքներ և անէծքներ կուղղուին երիտասարդութեան դէմ։ Գիշերը ուշ ատեն յեսադիմական խումբը ցոյցեր կը կազմակերպէ մէկ քանի ազատականներու տուներու առջեւ «անկցի» պոռալով օղիին ազդեցութեան տակ, բայց ոսոիկանութիւնը կը հալածէ զանոնք։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԽԱԼ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐ

(Շար. նախորդ թիւին եւ վերջ)

Հիմա գանք այն հարցին, թէ մեր ազգային գոյութեան պահպանութեան միակ պայման հայկական եկեղեցիո՞ն է թէ ոչ։ Ոմանք «այ՛ո» կըսեն, եւ մենք, նախընթաց տողերով հակառակը պնդելէ յետոյ՝ չենք վարանիր անդամ մըն ալ «ո՛չ» ըսելու, եւ խնդիրն այս անդամ ուրիշ տեսակէտով քննելու։

Մեր ազգային, ընտանեկան եւ անհատական շատ մը պզտիկութեանց ու նեղ ըմբռնումներու գլխաւոր մէկ պատճառը՝ հայկական եկեղեցին ազգային գոյութեան պահպանութեան «միակ պայման» ընդունիլն եղած է։ Այս անձուկ ըմբռնումով մեր յետսադոյն նախնիք, մինչեւ իսկ տակաւին արդի մեծամասնութիւն մը իրենց մտածմունքը, գործունէութիւնն ու զոհաբերութիւնը փառաւոր եկեղեցիներ կառուցանելէ, վանքեր հիմնելէ ու զանոնք «պայծառացնելէ» անդին անցուցած չեն։ Մեր ազգային պատմութեան մօտիկ անցեալի շրջանները անաչառ կերպով ուսումնասիրող մը պիտի չը վարանի յայտարարելու, որ այս վանաչէն քաղաքականութիւնը երկու տեւակէտով ազէտ եղած է ազգին գլխուն։ Նախ՝ վանքեր հաստատելու, զանոնք հարկաւոր կալուածներով ապահովելու եւ ներսէն ու դրսէն «պայծառացնելու» համար անհամեմատ գումարներ ծախսուած են, որոնց եթէ կէսը զուտ ազգային դաստիարակութեան նուիրուէր, մենք այսօր շատ տարբեր ժողովուրդ մը պիտի ըլլայինք։ Թող որ այս վանքերու ունեցած կամ երեւակայեալ հարստութիւնը մեր ազգի եւ կրօնի թշնամի վոհմակներ միայն հրապուրած է աւարելու, աւերելու և՛ւ վանքերը և՛ւ անոնց հարեւան հայ գիւղերը։ Ու հայ կղերը՝ այս կրկնուած դառն իրողութիւններէն փոխանակ խրատուելու՝ չարունակած է իր սեւեռուն գաղափարը տածել, վանքերը «պայծառացնելու» համար նոր գումարներ ու զոհաբերութիւններ քամել եկեղեցասէր ժողովուրդէն։ Այո, Թուրքին վերջին բարբարոսութեան պոռթկումը բազմաթիւ հայ վանքեր աւերեց, փճացուց. բայց ատկէ յառաջ ալ քանի՞ չէն ու «պայծառ» մակդրին իսկապէս արժանի եւ ի վեր քան զամենայն՝ գործօն վանքեր կրնան ցոյց տրուիլ մեզի։ — Հոս զանց կընենք յիշել Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքը, այդ առասպելի տակը ծակ կարասը։ — Եթէ մէկը չեղելով առարկէ թէ այդ քրիստոնէական հաստատութիւնները հայ ժողովուրդին ջերմեռանդութեան ազդակներն եղած են, իրաւունք կունենանք պատասխանելու, որ նիւթի վրայ հաստատուած եւ ձեւականութեան կոթնող ջերմեռանդութիւնը չը կրնար արտադրել լայն մտքեր, դրական հոգիներ։

Երկրորդ մասը, զոր վանքեր, վանական ու եկեղեցապատկան եւայլն կալուածներ ազգին հասցուցին, աւելի անաւոր է։ Անոնք ժողովուրդը՝ իր եկեղեցին ու դպրոցը իր քսակին հնչուն դրամովը կենդանի պահելու փրկարար դրութենէ մը զրկեցին. եւ զանիկա՝ իր ազգային պարտականութեանց հանդէպ անտարբերութեան դատապարտեցին։ ՏԱՂՐ ազգութեան աւագ չնչերակն է։ Օրը օրին, կամ շաբաթը շաբաթին իր գանձէն՝ իր անձէն՝ շատ կամ քիչ բան մը չը տալող անհատը ո՛չ առողջ կրօնասէր, ո՛չ ալ անկեղծ ազգասէր կրնայ ըլլալ։ Արդ, վերեւ յիշուած կալուածներու գոյութիւնը հայ անհատէն կապտեց յարատեւակ զոհաբերութեան այս կենսաբեր առիթը։ Քակէդ կամ անձէդ բան մը տուիր եկեղեցական կամ դպրոցական պէտքի մը համար.— եւ ահա պիտի զգաս որ սիրտդ ու աչքդ պիտի հետեւին նուէրիդ. կուզես գիտնալ թէ քեզմէ դացած բանը ի՞նչ նպատակի եւ ինչպէ՞ս կը գործածուի։ Հոս կըսկսիս դուն քեզի համարակալի հովեր, առո՛ղջ հովեր, աւելուրիչ բառով՝ ազգիդ մէջ անցած դարձածին վրայ հետաքրքրուիլ. վերջապէս վառուուն կեանքով մը ապրելու քաղցր դիտակցութիւնը կունենաս։ Ասանկ կենդանի կեանք մը միայն կրնայ օգտակար ըլլալ անհատին եւ անոր պատկանած հասարակութեան։ — Խոստովանինք որ մեր ազգային զանազան պէտքերուն համար տալու նշանակութիւնը մեր մէջ տակաւին լաւ ըմբռնուած չէ։ Հայ ունեւորներ կը խորհին թէ՝ «ա՛յնքան ազգային կալուածներ կան. քահանան ու վարժապետ թող երթան անոնց եկամուտովը ապրին. ալ ինչո՞ւ գլուխնիս կը ցաւցնեն»։ Գլուխնին այս կերպով հանդարտ պահելու տրամադիր պարոններու կուրծքերուն տակ, նոյնքան հանդարտ, թմրած սրտեր միայն կրնան գտնուիլ։ Մեր մէջ իրա-

Արսէն վարդապետ գիշերը կը հասնի Սոֆիա և առանց մէկու մը երեւալու՝ հետեւեալ օրուան կառախումբով ուղղակի շունչը Վիէննա կառնէ։ Կըսուի թէ Մարսիլիա պիտի երթայ հնավաճառխանութեանին անձամբ պատմելու իր կրած բարոյական և նիւթական վնասները։

* * *

Յեսադարձ ակնարկ մը նետելով իրերու վրայ, կը տեսնենք թէ Արսէն վարդապետի արտաքսումը չը նշանակեր Փ. Պոլսի վերջնական խաղաղացումը։ Յորչափ դպրոցը կը մնայ ներկայ արդահատելի վիճակին մէջ, ցորչափ աղգին դրամները չորթողները չեն հրապարակուիր, Փ. Պոլսի աղգային շրջանակը չը խաղաղիր։ Արսէն վարդապետ պարզ գործիք մըն էր յեսադիմական խմբա՛ին ձեռքը։ Հետեւապէս աղգային հանդարտ զարգացումի կուսակիցները պարտին այս երկու կարեւոր խնդիրները լուծել առիթէն օգտուելով։

Պատրիարքարանը արդէն նշանակած է քննիչ վարդապետ մը որ պիտի կատարէ նաեւ թաղական խորհրդոյ ընտրութիւնը։ Հոգաբարձութիւնն ալ պիտի ընտրուի մէկ քանի ամիսներէն։ Միւս կողմէ յեսադիմականներէն երեսուն և հինգ անձեր դատարանին յանձնուած են իրենց արդար պատիժը կրելու համար։ Ուրեմն յուսանք թէ քիչ ժամանակէն Փ. Պոլսի աղգային շրջանակը պիտի փայլի դրական և օգտակար գործունէութեամբ։

* * *

——)·(——

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

—

«Իրաւունքի» խմբագրին՝ իր յայտնի, հրապարակային խեղաթիւրումներէն յետոյ, կարմրիլ միայն կը մնար։ Դժբաղդաբար յարատեւելով միշտ իր խոտորնակ ճամբան, լրագրական բարոյականի սկզբունքները մոռցած, յախուռն կերպով կը յարձակի անձնաւորութեանց վրայ։

Այսօր մեր սեղանին վրայ ունինք զանազան տեղերէ եկած կարգ մը գրութիւններ, որոնք Լեւոն Սարգիսեանի և Վահան Շահրիմանի անձերը կը պաշտպանեն Իրաւունքի «ապերախտ» յարձակումներուն դէմ։ Աւելորդ կը սեպենք անոնց հրատարակութիւնը, գիտնալով որ Լեւոնն ու Վահանը ճանչցողները՝ դժուարութիւն չի պիտի քաշեն հասկընալու թէ «Իրաւունքի» «էրած» սրտով արձակած հայհոյութիւնները ի՞նչ կարժեն։

Իսկ զալով «Ճարժումի» մասին գրածներուն, մենք սկիզբէն մինչեւ հիմա միշտ արհամարհանքով նայած ենք այն հայհոյութիւններուն, որոնք տգեղ նպատակներէ առաջնորդուած մեկի կուզուին։ «Իրաւունք» իր վերջին զարտուղութիւնովը միւնոյն արհամարհանքը կը ներշնչէ մեզի։ Ալ թող ուղածին չափ բազմապատկէ իր խեղաթիւրումները. բոլորովին սանձարձակ կը թողունք զինքը, իր ինքնամոռ արշաւանքներուն մէջ դէպի «Ճարժում» և անոր խմբագիրները։

Մենք կը սիրենք հաւասարներու հետ կռուիլ։

——)·(——

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պատասխան Հնչ. հին ճիւղի Ռուսչուքի կոմիտէի թիւ 4 շրջաբերականի.

Ի՞նչ է ձեր նպատակը. Զէյթունը նպաստէ ղրկե՞լ, թէ ըլլալիք նպաստը ղեղծումէ փրրկել։ Եթէ առաջինն է ձեր նպատակը, ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք ձեզ, ձեր այդ բարի և գեղեցիկ նպատակին համար, և կը շնորհաւորենք այն յառաջդիմութեան համար, զոր այս կերպով կընէք աղնութեան ու վեհանձնութեան աշխարհին մէջ։ Ի՛սկ եթէ այդ չէ ձեր նպատակը, այլ ընդունելով Զէյթունի օգնելու պէս գեղեցիկ ձեռնարկ մը՝ կուզէք միայն այդ նպատակաւ ըլլալիք նպաստը ղեղծումէ փրրկել, ի՞նչ հարկ ուրեմն հայհոյանքներու և անիմաստ խօսքերու. Ի՞նչու որոշապէս մատնանիշ չէք ըներ ձեր թռուցիկին մէջ այդ նպաստը հաւաքելու և ուղարկելու համար մեր առաջարկած կերպին մէջ այն կէտերը, որք ձեր հաշիւով կասկածելի են. և կամ դուք ինչո՞ւ չէք ցոյց տար ուրիշ կերպ մը, որ աւելի ապահով և աւելի լաւ ըլլար։

Գալով մեր մասին եղած զրպարտիչ հայհոյանքներուն, կարականապէս կըսենք թէ, մենք ձեզ (կարմիր կնիք շրջաբերականը հանողներուդ) տուինք նախատական մակդիր մը՝ ցոյց տալով այդ մակդիրը ձեզ վայլեցընող այն պերճախօս փաստը, որ կը փայլէր ձեր շրջաբերականին մէջ. որ է ղէյթունցիին պէս սովեալներ փրկելու համար եղած ջանքի մը արգելք հանդիսանալ բացարձակ սուտերով. իսկ դուք ամէն տեսակ զրպարտութիւն և լուտանք թափեցիք մեր վրայ, առանց մէկ հատիկ փաստի։ Արդ կը փութանք խոտիւ պահանջել, որ այդ զրպարտութիւնները փաստերով հաստատէք հրապարակաւ, ինչպէս հայհոյած էք հրապարակաւ. եթէ ոչ, մենք այն առեն մեր տուած մակդիրին քով աւելցնելով նաեւ ուրիշ աւելի գէշ մակդիր մըն ալ՝ զայն ձեր ճակտին կը դրոշմենք, և այս մասին բաւական համարելով հասարակաց դատաստանը, որ մաքերու մէջ եղած է արդէն, կը վերջացնենք մեր հաշիւը ձեզ հետ։

Զէյթունի նպաստին համար շրջաբերականով հրաւէր ընող երիտասարդներ

Ռուսչուք, 23 Մարտ

ՔՐՈՆԻԿ

—

Վառնայի քահանայներէն Ցէր Գէորգ Հիւրմիւզեան մասնաւոր նամակով մը մեզ կը յայտնէ թէ, այսուհետեւ զաղթականներու ամուսնութեան առթիւ իրենց գաւառի առաջնորդարանէն ամուսրիութիւնը հաստատող պաշտօնական գրութիւն մը չեկած, որ և իցէ ամուսնութեան հրաման պիտի չի տրուի։ Թէեւ զաղթականութեան հոսանքին ժամանակ այցելու հովիւներու անօրինութեամբ չորս անձերու վկայութեամբ ամուսնութիւններ կատարուեցան, սակայն այս դրութեան վտանգը ակներեւ ըլլալով, այսուհետեւ երբէք թոյլտուութիւն պիտի չըլլայ։

—Սելանիկի հայերուն մէջ 40 ոսկի հաւաքուեր է Վանի տառապեալ հայերուն համար՝ նախաձեռնութեամբ վանեցի Տր. Գալուստ Ասլանեանի։

—Կ. Պոլսէն մեկնած Ֆրանսական շոգենաւով, կաթոլիկ վարդապետի մը առաջնորդութեամբ

ւունքի եւ պարտուց առողջ գիտակցութեան պակասը, վերջապէս ազգային ուժեղ համերաշխութեան մը բացակայութիւնը այս սխալ ըմբռնումներուն ողբալի հետեւանքներն են։ (*)

Նախընթաց խօսքերով մենք ըսել չենք ուզեր որ մեր եկեղեցիները հոյակապ չենքեր չըլլան, կամ հայը վանքեր չունենայ. ընդհակառակը, որքան հոյակապ ըլլան մեր եկեղեցիները, այնքան պատիւ ընծայուած կըլլայ կրօնքին եւ ազգին։ Ինչ որ ըսել, կամ յաւէտ կրկնել կուզենք՝ այն է, որ եկեղեցին ուշադրութեան եւ յոյսի միակ առարկայ ու մեր ազգ. գոյութեան «միակ պայման» նկատել չարունակելը՝ յառաջդիմութեան ճամբուն մէջ մեզ շատ եա կրնայ պահել։ Տիրացու ժողովուրդ մը մնալու խորհուրդը սուսկացնելու է մեզ։ Գալով վանքերուն, չվարանիմ յայտնելու, որ երկնից սաղերուն չափ բազմաթիւ վանքերու պէտք չունէր հայը։ Մեր պատմութեան ոսկեդարուն վանքերը՝ արթուն հովուապետներուն մեղուաջան խնամքին ներքեւ՝ լոյսի, կեանքի վառարաններ, մտքի ձուլարաններ եղան. իսկ այսօր ո՞վ չիսոստովանիր որ այդ վայրերը... ծուլարաններ են յաւէտ։ Բաց ասսի չափազանց եկեղեցապաշտութիւնը զհայը մինչեւ մէկ աստիճան դիպուածապաշտ ու վիհերոտ ըրած է, եւ այդ, ի հարկէ, ի վնաս կամ ի բթացումն մեր զուտ ազգային զգացումներուն։

Պատմութեան առջեւ մեղանչած չըլլալու համար անկեղծօրէն յայտնենք, որ անցեալի մէջ եկեղեցին իր թեւերուն տակ պահպանած է մեր ազգային գոյութիւնը՝ ընդդէմ գրեթէ միատեսակ յարձակումներու։ Այսօր, սակայն, մեր ազգ. գոյութեան դէմ ուղղուած յարձակումները, լարուած գաւերն ու սպառնալիքները իրենց որակովը ու քանակով անհունապէս կը տարբերին հիներէն։ Եւ այս իսկապէս սպառնական յարձակումներուն լեգէոններուն դէմ մինակ եկեղեցիի խաչով դուրս գալը, պարզապէս այդ խաչին վրայ նահատակուելու երթալ պիտի նշանակէ։ Ուրիշ խօսքով, մեր ազգ. գոյութեան բուռն եւ բարդ պայքարին մէջ հայ եկեղեցին մեր միակ վահանը չէ. ուրիշ զէնքերու, ուրիշ պայմաններու պէտք ունինք իրր ազգ ապրիլ կարենալու համար։ Մէկ երկու չոշափելի փաստեր, յուսամ, աւելորդ չը սեպուին հոս։ Մէկէ աւելի անգամներ Պուլկարիոյ հայ մամուլին մէջ՝ Ռումանիոյ հայերուն «կորուստին» կամ «մերձակորուստ» վիճակին վրայ ողբեր ու զամբանականներ կարդացուած են։ Հիացում յայտնելով հանդերձ՝ այդ երկրին մէջ ապրող մասերու վրայ համրելի քանի մը հայ ընտանիքներու ջղուտ ազգասիրութեանը վրայ, չենք կրնար մեր կսկիծը զսպել մեծ զանգուածին դատապարտելի եւ դատապարտող անտարբերութեան՝ վերջապէս կորուստի նմանող վիճակին վրայ։ Արդ, ո՞չ ապաքէն այս հայերն ալ լուս. եկեղեցին կը դաւանին, մարդիկը ամէն քաղաքի եւ գիւղի մէջ եկեղեցիներ ալ ունին (*)։ Ալ ինչո՞ւ ուրեմն մենք զանոնք կորածի տեղ կը դնենք։ Այս հարցումին ինչ առարկութիւն կամ պատասխան ալ տրուի, մենք պիտի չդադրինք արձագանգն ըլլալէ յայտնի իրողութեան մը, այն է թէ՝ հայ եկեղեցին մինակ՝ ինք իր զլխուն՝ Ռումանիոյ հայերուն ազգ. գոյութիւնն ապահովելու անզօր գտնուեցաւ։ Նոյնը Հնդկաստանի հայ զաղթականութեան համար։

Ռումանիայէն քայլ մը աւելի վեր երթանք. Սուչաւայի մէջ (Պուքովինա) ափ մը հայեր կը գտնենք, որոնք ազգային կեանքէ աւելի վառուն

(*) Թէ ի՞նչ միջոցներով պէտք է մաքառիլ այս արմատացած չարիքին դէմ, շատ բարդ խնդիր մըն է արդարեւ, որուն թերեւս անդրադառնանք աւելի պատեհ առթիւ։

(*) Որքան ալ հիանանք Տ. Գր. Պուլուզլիսի (աւելի լաւ՝ Պուլուզլեանի) քաղաքագիտական ձիրքերուն վրայ, չենք կրնար զինքը չնորհաւորել իր «մենք հայակրօն ռումինեներ ենք» անիմաստ եւ վնասակար բացատրութեան համար։ Հայութիւնը կրօնք մը չէ, այլ ազգութիւն՝ կամ քաղաքագիտական բացատրութեամբ՝ հասարակութիւն։ Ուստի ի՞նչ հարկ մայրուրաց ըլլալ։ Մեր ռումանահպատակ հայ եղբայրներուն ուշադրութեան կը յանձնենք այս թռուցիկ ծանօթութիւնը։ Եւ այս առթիւ չենք վարանիր իրր անտեղի հոչակել մեր միջեւ, իսկ յայտնի գրագէտներուն գործածած «տաճկահայ, ռուսահայ, պուլկարահայ» եւայլն խորթ բացատրութիւնները։ Տաճկութենէ դարձած կամ տաճկացած հայու մը կարելի է տալ «տաճկահայ» մակդիրը։ Աւելի ուղիղ չէ՞ ըսել՝ տաճկահպատակ հայ, ռուսահպատակ հայեր եւայլն։

գաւառացի 21 հայ մանկամարդ աղջիկներ Մարսիլիա տարուեր են։ Ասոնք կաթոլիկութիւնը ընդունած ըլլալով, ապաստանած են կուսական զանազան վանքերու մէջ։

—Փ. Պոլսի հայ տիկիններն և օրիորդները վիճակահանութիւն մը կազմակերպած են Վանի սովեալներուն օգնութիւն հասցնելու համար։ Կը յուսացուի թէ 1500 ֆրանքի մօտ գումար մը գոյանայ։

—«Մշակ»ի մէջ կը կարդանք թէ Թիֆլիզի Ս. Գէորգ եկեղեցիին մէջ մի գայթակղական դէպք պատահեր է։ Քահանաները կարգաւ կըսկսին դրամ հաւաքել տուփերով և գանձանակներով։ Ամենէն յետոյ քահանայ մը կըսկսի դրամ հանգանակել աշակերտի մը գլխարկով։ Քահանան կը յայտնէր թէ բոլոր տուփերը պահուած էին որպէս զի ինք զրկուի հանդանակութենէն. ժողովուրդը առատօրէն դրամ ձգեց գլխարկին մէջ։ Ետոյ ցոյց մը կը կատարուի որու միջոցին կը տեսնուի թէ եկեղեցւոյն աւագ քահանան պահած էր տուփերը։

—Բաղէշէն կը գրեն թէ գերմանացի Տօքթ. Վօլտէմար Վէյք և Տօքթ. Բաուլ Լէման հնախօյզները Վանէն հոն հասեր են, բայց չե՛ն կարողացեր խուզարկութիւններ ընել ձմռուան սաստկութեան պատճառով։ Յիշեալ գիտունները Մուշը, Տիգրանակերտ և շրջակաները այցելելէ յետոյ, վերստին Բաղէշ պիտի դառնան։

—Բեդրպաուրկի Ռուսական թերթերը կը գրեն թէ մարտ 6ին լրացած է հռչակաւոր ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքիի գործունէութեան 65 ամեակը։ Յովհաննէս Այվազովսքի պատուակալ անդամ է Ռուսիոյ կայսերական նկարչական ակադեմիային։

—Հալէպյուտնի Ճիպութի քաղաքէն կը գրեն թէ Սոմալիները յարձակում գործելով ինը գործաւորներ սպաննած են որոց մին 40 տարեկան վանեցի հայ մը։ Իր մարմինը անդամատ աւազին տակ թաղեր են։ Գալանդամ թղթակցութիւն մը պիտի հրատարակենք Ճիպութիի հայերու մասին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարիոյ և Ռումանիոյ միջեւ քաղաքական դէպք մը պատահեցաւ որ նշանակութեան արժանի է։ Արեւելեան Րումէլիի մէջ գտնուող յոյները զինուորագրութեան կոչուած էին։

Սոֆիայի Յունական գործակատարը բողոքեց այս կարգադրութեան դէմ իր կառավարութեան հրամանով և պահանջեց որ անմիջապէս ազատ արձակեն այն յունահպատակները որք, զինուոր ըլլալէ հրաժարելնուն պատճառով բանտարկուած էին Պուլկար կառավարութեան կողմէ։ Միեւնոյն ժամանակ Յունական կառավարութիւնը դիմումներ ըրեր է Աթէնքի Պուլկար գործակատարին։

—Կոմս Լէօն Թոլսթոյ գրած է Ֆինլանտացի բարեկամի մը. «Բոլոր զարգացած ռուսները ինծի հետ միասին մեծ համակրութիւն կը տածեն դէպի ֆինլանտացիները։ Կը կարծեմ թէ փոխանակ Ֆինլանտան Ռուսացնելու, լաւագոյն կըլլար եթէ Ռուսիոյ մէջ մտցուէին այն կարգերը և օրէնքները որոց շնորհիւ Ֆինլանտիա զարգացաւ և յառաջդիմեց»։

—Ֆինլանտիայի ընդհ. նահանգապետ զօրավար Պօպրիքօֆ ղրկած է ընդհանուր յանդիմանական շրջաբերական մը ֆինլանտիայի գաւառական ժողովներուն վարմունքին առթիւ, վասն զի այս վերջինները չը կրցան խանգարել երկրին մէջ շրջաբերուած բողոքագիրներուն ստորագրուիլը։ Նահանգապետը կը խնդրէ Ֆինլանտիայի ազգային ժողովէն Ջարին հրովարտակին աւելցնել ժողովուրդը հանգարտեցնող ծանօթութիւններ։ Ազգային ժողովը վերջնականապէս մերժած է զայն։

—Կ. Պոլսէն կը հեռագրեն «Թան»ին թէ Սերպիոյ դեսպանը ծանուցագիր մը տուեր է Բ. Դրան որով կը բողոքէ Քոսովայի նահանգին մէջ սերպերու անհանդուրժելի դրութեան մասին։ Ծանուցագիրը կը յարէ թէ այս կացութիւնը կըստիպէ սերպերը գաղթել և մեծ նեղութիւն պատճառել Սերպ կառավարութեան։ Ծանուցագիրը կը պահանջէր սահմանեալ օրէնքներու խիստ և անաչառ գործադրութիւնը։

—Մարտ 14ին Սթօքհոլմի մէջ միթինկ մը գումարուեցաւ Ռուսիոյ Ֆինլանտիայի մէջ ձեռք առած նոր բռնութեանց առթիւ, մեծ համակրանք արտայայտուեցաւ դէպի ֆինլանտացիները, և մեծ հակակրութիւն ցուցուեցաւ դէպի Ռուս բռնակալութիւնը։ Այս իմաստով որոշումներ քուէարկուեցան։

—Կըսուի թէ ամէն պետութիւն պիտի ուղարկէ վեհաժողովին մէկ ծովային և մէկ ցամաքային զինուորական բարձրագոյն սպայ, որպէսզի զէնքկեցութեան զուտ մասնագիտական խնդիրներու մէջ աջակցին իրենց պետութեան ներկայացուցիչներուն։

—Ռուս դեսպանը մարտ 22ին յայտնեց Մ. Սիլվէլայի Ջարին կողմէ արտայայտուած շնորհակալութիւնը Սպանիոյ զանազան կողմերէն հասած համակրական հեռագիրներուն համար՝ նկատմամբ Ջարին զինաթափի առթիւ ըրած առաջարկին։

Տօքթօր Ալ. Աթաբէկեան

Տեղափոխուած է Շումէնսկի փողոց, թիւ 1234, Բ. յարկ, ոստիկանապետութեան կից։ Հիւանդներ կընդունի ամէն օր առաւօտեան ժամ 8—10 եւ կէս օրէն վերջ 4—6։

ՄԻԱՅՆ ԱՂՔԱՏՆԵՐԸ ՁՐԻ։

ՊՕՐՍԱ

Վառնա 31 Մարտ

ՊՈՒՂՏԱՅ

Վակօն, լիպրա 55—58, հէքթօլ. 8.80—9.30 ֆրանք

Արապա, լիպրա 55—60 հէքթօլ. 9—11 ֆրանք

ԱՐՊԱ

Լիպրա 42—50 հէքթօլ. 6.10—6.40 ֆրանք

ՄԻՍԻՐ

Վակօն, 55—57 լիպրա, 5.?5—5.85

Արապա, 55—60 լիպրա, 5.90—6

Կիւնէյ 15—20 վակօն, 25—30 արապա կէլմէքտէ տիր։

ՏԱՐԸ

Կիւնտէ 1—2 արապա կէլմէքտէ տիր. 58—60 լիպրա, 5.40—5.80 ֆրանք

Առապա մուամէլէսի Նաբոլէօն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна.

նշաններ ցոյց տուած են — Մաղթե՛նք որ նոյնը շարունակեն աւելի մեծ նախանձով։ — Այս հայերն ալ լուս. եկեղեցւոյն կը պատկանին. եւ ինչ որ քայլ մը վարը պատահեցաւ կամ կը պատահի, վստահաբար, հո՛ս ալ նոյնը պիտի պատահէր, եթէ Սուչովացի հայերը իրենց եկեղեցւոյն միայն յենած եւ միա՛յն զանիկայ պահած ըլլային։ Մեր Սուչովարնակ հայ եղբայրները բարեբաղդաբար եկեղեցիէն ի զատ պահեցին նաեւ իրենց ազգային լեզուն, եւ աւելի հաւատարիմ աւանդապահ եղան ազգային ինչ ինչ աւանդութեանց։ Նոյն մխիթարական երեւոյթին կը հանդիպինք նաեւ Ճաւայի հայ գաղութին մէջ։ Արդ, այս իրողութեանց հանդէպ կըստիպուինք ընդունիլ՝ թէ մեր մայրենի լեզուն ազգային գոյութեան պահպանութեան մէջ զանցառելի քանակ մը չէ։ Թրքախօս հայերուն ազգասիրական ձգտումներուն թուլութիւնն ալ ուրիշ ապացոյց մը։

Բայց ազգ. գոյութեան ամենամեծ եւ պատկառելի պայմանը մենք չարտասանեցինք տակաւին։ Անիկայ ազգային դաստիարակութիւնն է իր ամենալայն ըմբռնումովը։ Մեր ազգ. գոյութիւնը պարփակող, զօրացնող այս շղթային միայն մէ՛կ օղակն է եկեղեցի՛ն, ուրիշ մէկ օղակն է դպրոցը, մայրենի լեզուն, ազգային մամուլը, ուրիշ մէկ օղակն է ազգային սովորութիւնները, օղակ մըն ալ հայ անհատական, ընտանեկան եւ ազգային բարոյականը, օղակ մըն ալ ազգային ինքնաճանաչութեան եւ օրուան ու վաղուան պէտքերուն համեմատ զարգացում կեանքի զանազան կոչումներուն մէջ, եւ վերջին օղակ ու պսակ ամենուն՝ ազգային համերաշխ ոգի։

Կերաշխաւորեմ ձեզ որ Վարագայ վանքը իր մահաբեր քունէն ա՛յն օրն արթնցաւ՝ երբ Խրիմեան առողջ տրամաբանութեամբ մը՝ խաչէն եարը, բայց անոր հաւասար խօսքը քարոզեց իր հաստատած երկրագործական վարժարանին մէջ, եւ մամուլի զրնգիւնով կենդանութեան շունչ մը ծորեցուց այդ գիտկնացած սրբավայրին մէջ։ — Խրիմեան այդ կարճատեւ օրերուն մէջ միայն կրցաւ իսկապէս մեծ ըլլալ։ — Իրաւ է թէ Թուրքիոյ ներքին գաւառներուն մէջ մամուլ հաստատել չթոյլատրուիր հայերուն, բայց մենք գիտենք տակաւին մեր ձեռքն եղած առիթներն ու արտօնութիւնները նպատակայարմար կերպով գործածել, ու չյաւականանանք մեր ակնկալութիւններն եկեղեցւոյն չորս պատերուն մէջ թաղելով։ Կերաշխաւորեմ ձեզ դարձեալ, որ Կ. Պոլսի հայոց Միացեալ ընկերութիւնները իրենց կարճատեւ բայց կենսալից գործունէութեամբ շատ աւելի օժանդակեցին ազգային գոյութեան պահպանմանը՝ քան Էջմիածինն ու Երուսաղէմը իրենց դարաւոր քնաթաթախութեամբ։ Չերկարենք։ Մեր ազգային գոյութեան երդուեալ թշնամիներ իրենց ամենաթունաւոր նետերը մեր եկեղեցւո՞յն կուղղեն թէ ոչ՝ մեր դպրոցներուն ու մեր մամուլին։ Դեռ երէկ Կովկասի հայերուն դպրոցական դաստիարակութեան ուղղուած մահացու հարուածը եւ անոր ներքեւ բոլոր հայերուս զգացած կսկծոտ սարսուռը պատասխանի տեղի չեն թողուր։

Ընդհանրացած սխալ՝ եւ ինչպէս տեսանք՝ վտանգաւոր ըմբռնումներուն դէմ է որ հարկադրուեցանք շարժել մեր գրիչը։ Ներկայս ոչ միայն իբր քառորդ միլիոն բողոքական եւ կաթոլիկ հայերու, այլ ամբողջ հայ զանգուածին համար մահու եւ կեանքի խնդիր մըն է, անոր ծանրակշռութիւնը պարտք կը դնէ ամենուս վրայ լրջօրէն զբաղիլ անով։ Եւ մենք հոս աւելորդ չենք սեպեր հրաւիրել լայն խորհելու, հեռուն տեսնելու ընդունակ հայ գրողները, որ՝ յօգուտ հայութեան՝ հաճին յայտնել իրենց տեսութիւնները յուզուած խնդրոյն վրայ։

Մանրավէպ մը եւ վերջ։ Երջանկայիշատակ Ներսէս Պատրիարք իր կեանքի վախճանին մօտ անգամ մը բողոքական հայերու պատուիրակութիւն մը ընդունեց։ Պատուիրակութիւնը լուս. եւ բող. հայերուն միջեւ եկեղեցական միութեան մը ցանկալիութիւնը յայտնելով՝ Նորին Սրբազնութեան կարծիքը խնդրեց։ Ներսէս ուրախ տրամադրութեամբ մը՝ առաջարկութեան ցանկալիութիւնն եւ անոր կարելիութեան մասին իր հաւանքը յայտնելէ վերջ՝ յարեց սա նշանակալից բառերը, «Խաւարը բաժնեց մեզ, լոյսը պիտի միացնէ. ուստի, լոյս տարածենք»։ Ներսէսի ակնարկած լոյսը՝ ազգային, ազատախոհ, լայն դաստիարակութիւն մըն է, որուն շնորհաբեր ազդեցութեան ներքեւ՝ այլադաւանութեան մասին ցոյց տրուած աննկողութիւններ, նախապաշարումներ ու անոնց աղէտալի հետեւանքները գոյութիւն ունենալէ պիտի դադրին վստահաբար։ Ուստի, լո՛յս տարածենք։

Գ.

——).(——